Պարունակում է մրցութային գաղտնիք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 47

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2009թ. դեկտեմբերի 2-ին ժամը 16:00-ին ՀՀ Կառավարության նիստերի դահլիճում կայացած նիստի

Նիստը նախագահում էր.

ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Արմեն Գևորգյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Ներսես Երիցյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Տիգրան Դավթյանը	ՀՀ ֆինանսների նախարար
Գերասիմ Ալավերդյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Գուրգեն Սարգսյանը	ՀՀ տրանսպորտի նախարար
Արման Ոսկանյանը	«Տավուշի զարգացման» ՀԿ-ի ներկայացուցիչ
Կարեն Զադոյանը	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Պողոս Շահինյանը	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ
Վիկտոր Ենգիբարյանը	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ի նախագահ

Կառավարման խորհրդի դիտորդ.

Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն

Նիստից բացակայում էին.

Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի փոխնախագահ
Շիրակ Միքայելյանը	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ-ի լիազոր ներկայացուցիչ

Ռուբեն Խաչատրյանը	«Հայաստանում վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության» հիմնադրամի տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ

Նիստին հրավիրված էին.

Արամ Հարությունյանը	ՀՀ բնապահպանության նախարար
Դավիթ Սարգսյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, կառավարման խորհրդի քարտուղար
Անահիտ Պետրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Ջրից դեպի Շուկա ծրագրի ղեկավար/Տնտեսագետ
Տիգրան Քալանթարյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Ոռոգման ծրագրի ղեկավար
Ինեսա Գաբայանը	Մոթ ՄաքԴոնալդ (Մեծ Բրիտանիա) ընկերության ներկայացուցիչ
Արամ Անանյանը	ՀՀ Վարչապետի օգնական
Հովհաննես Սահակյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Ռիմա Եգանյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետ
Մարինա Քուշքյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի արձանագրային բաժնի աշխատակից
Տիգրանուհի Բաղդասարյանը	Թարգմանիչ

Նիստը բացեց ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը:

Նիստի օրակարգում ներկայացվել էին հետևյալ հարցերը.

1. ՀՀ ոռոգման և դրենաժի ազգային քաղաքականության նախագծի քննարկում և հետագա քայլերի հաստատում:
2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ծրագրի Ենթակառուցվածքներ բաղադրիչի շրջանակներում Արարատյան դաշտավայրի դրենաժային համակարգի վերականգնման Երկրորդ փաթեթում ընդգրկված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում:
3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի գնումների փոփոխված ուղեցույցի ներկայացում և գնումների պլանի փոփոխության քննարկում և հաստատում:
4. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի տարեկան լրացուցիչ հաշվետվության քննարկում և հաստատում:
5. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ՊՈԱԿ-ի աշխատակազմի աշխատավարձերի տարեկան բարձրացման և պարգևավճարների վերաբերյալ տեղեկատվության քննարկում և հաստատում:
6. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի նորընտրիր կազմի գործունեության և առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում:
7. Այլ հարցեր՝

   ա/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում Սպիտակի ինքնահոս համակարգի կառուցման պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգին կից ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից կառավարման խորհրդի անդամներին ներկայացվել էր նաև յուրաքանչյուր հարցի վերաբերյալ համապատասխան տեղեկանք՝ կից փաստաթղթերով:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց, որ ներկայացված Ոռոգման և դրենաժի հայեցակարգի (այսուհետև՝ Փաստաթուղթ) հաստատումը ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից հանդիսանում է ծրագրի նախապայման և ենթակա է կատարման մինչև սույն թվականի դեկտեմբերի 15-ը:

Փաստաթղթի նախագիծը մշակվել է ՀՄՀ-հայաստան ծրագրի շրջանակներում Մոթ ՄաքԴոնալդ (ՄԲ) ընկերության կողմից, Կառավարման խորհրդին ներկայացվում է որպես հայեցակարգային փաստաթուղթ, և իր մեջ ներառում է ոռոգման ոլորտի բարեփոխումներին ուղղված նախաձեռնություններ և քայլեր:

2009թ. օգոստոսի 7-ին Փաստաթղթի առաջին նախագիծն արդեն իսկ ներկայացվել է կառավարման խորհրդի քննարկմանը և որոշում է ընդունվել, որ Փաստաթուղթը որպես հայեցակարգային կհաստատվի մինչև 2009թ. վերջ: Փաստաթղթի վերաբերյալ մի շարք քննարկումներ են տեղի ունեցել շահագրգիռ մարմինների հետ, մասնավորապես՝ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանի մոտ տեղի են ունեցել մի շարք քննարկումներ, ստացվել են շահագրգիռ մարմինների կարծիքները, կազմակերպվել է եռօրյա (հոկտեմբերի 5-ից 7-ը) կլոր սեղան, որտեղ քննարկվել են վիճահարույց հարցերը: Ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները

ուսումնասիրվել են, վերանայվել է Փաստաթուղթը և ներկայացվել է կառավարման խորհրդին: Վերանայված տարբերակի վերաբերյալ հնարավոր բոլոր դիտողություններն ու առաջարկությունները կքննարկվեն նաև մոտակա տաս օրվա ընթացքում և վերջնականացվելուց հետո, Փաստաթուղթը դեկտեմբերի 16-ին նշանակված նիստին կներկայացվի Կառավարման խորհրդի հաստատմանը: Կառավարման խորհրդի կողմից հաստատվելուց հետո վերջինս ենթակա է հաստատման ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի կողմից: Այդ հաստատմամբ նախապայմանը կհամարվի բավարարված:

Երկրորդ նախապայմանի բավարարումը ենթակա է իրականացման մինչև 2010թ. սեպտեմբեր ամիս և իր մեջ ներառում է Ռոգման և դրենաժի ազգային քաղաքականության և ռազմավարության, ներկայացված քայլերի իրականացման ժամանակացույցի և վերջիններից բխող անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների ամբողջական փաթեթի հաստատումը ՀՀ Կառավարության կողմից:

Անդրանիկ Անդրեասյանը նշեց, որ ներկայացված Փաստաթղթի վերաբերյալ հարցադրումներ չկան, սակայն կան որոշ վիճահարույց հարցեր, որոնց վերաբերյալ վերջնական համաձայնություն ձեռք չի բերվել, մասնավորապես՝ Խորհրդատուն առաջարկում է ՋՕԸ-երին տրամադրել հարկային արտոնություններ, որի վերաբերյալ առկա է ՀՀ ֆինանսների նախարարության հակափաստարկը: Այնուամենայնիվ փաստարկների ուսումնասիրությունից հետո Խորհրդատուն Փաստաթղթում ներկայացրել է հարկազատման անհրաժեշտության մասին իր պնդումը:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե ինչո՞վ է Խորհրդատուն հիմնավորում հարկազատման անհրաժեշտությունը:

Անդրանիկ Անդրեասյանը նշեց, որ ՋՕԸ-երը հանդիսանում են ֆերմերների միավորում, որի նպատակն է ջրի բաշխումը ֆերմերների միջև և ըստ էության այստեղ չի իրականացվում առևտրային գործունեություն, այսինքն ՋՕԸ-ն ունի սպառողական կոոպերատիվի բնույթ և շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում ու ջրի դիմաց ստացված վարձավճարներն էլ ուղղվում են ջրի բաշխման համար անհրաժեշտ ծախսերին:

ՀՀ Վարչապետը նշեց, որ այս դեպքում խոսքը պետք է գնա ոչ թե ՋՕԸ-երին հարկային արտոնություններ տալու, այլ՝ նրանց կարգավիճակը փոխելու մասին:

Անդրանիկ Անդրեասյանը նշեց, որ ՋՕԸ-երի կարգավիճակը սահմանված է առանձին օրենքով:

ՀՀ Վարչապետը նշեց, որ եթե ՋՕԸ-երը շահույթ ստանալու նպատակ չեն հետապնդում, ապա շահութահարկի վճարման խնդիր չի առաջանում:

Անդրանիկ Անդրեասյանը հայտնեց, որ խոսքը հիմնականում գնում է ԱԱՀ-ի մասին, որին ի պատասխան ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը մեջբերեց, որ ԱԱՀ-ից ազատել հնարավոր չէ, քանի որ ԱԱՀ-ի հիմնական գաղափարը դա շղթան է և եթե ՋՕԸ-ն շղթայի մեջ է, ապա նրա ազատման արդյունքում շղթան կխանգարվի:

Ներսես Երիցյանն ավելացրեց, որ այս դեպքում խոսքը գնում է ՋՕԸ-ի, որպես ծառայություն մատուցող սուբյեկտ առաջացող հարկերի և հարկազատման մասին:

ՀՀ Վարչապետը նշեց, որ ՋՕԸ-երի հարկազատումը վատ նախադեպ է, քանի որ մյուս ոլորտները ևս առաջ են քաշելու իրենց հարկազատման խնդիրը, բացի այդ ԱԱՀ-ն արդեն իսկ մտած է ջրի գնի մեջ և այն ըստ էության վճարում է վերջնական սպառողը, որը ֆերմերն է:

Տիգրան Դավթյանը նշեց, որ հարկազատում կարող է կիրառվել շղթայի վերջին օղակի վրա, որը ՋՕԸ-ն չէ և վերջինիս հարկազատման դեպքում ամբողջ շղթան կխանգարվի:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե նախորդ տարի ՋՕԸ-երը որքա՞ն ԱԱՀ են վճարել:

Անդրանիկ Անդրեասյանը պատասխանեց, որ ընդհանուր գումարը կազմել է մոտ 800-850 մլն ՀՀ դրամ:

ՀՀ Վարչապետը նշեց, որ եթե կիրառվի հարկազատում, ապա ենթադրվում է, որ ջրի գինը պետք է նվազի, որը բնականաբար ՋՕԸ-երի կողմից չի իրականացվի:

Անդրանիկ Անդրեասյանը պատասխանեց, որ ներկայումս ոռոգման ջրի համար վճարված գումարները բավարար չեն անգամ ընթացիկ ծախսերի ծածկման համար, իսկ կապիտալ ծախսերի մասին ընդհանրապես խոսք չի գնում: Փաստաթղթում խորհրդատուն առաջարկում է ստեղծել կապիտալ ծախսերի ծածկման հատուկ ֆոնդ և որպես ԱԱՀ գոյացած գումարներն ուղղել այդտեղ:

ՀՀ Վարչապետը հայտնեց, որ ըստ էության խոսքը գնում է ոչ թե հարկազատման, այլ հարկից ստացվող գումարը կապիտալ ծախսերի ծածկման համար ՋՕԸ-երին տրամադրելու մասին, որը կարելի է քննարկել:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ Խորհրդատուի ներկայացուցիչը ներկա է և կարող է ներկայացնել Փաստաթուղթը և պատասխանել բաց հարցերին:

Ինեսա Գաբայանը ներկայացրեց ՋՕԸ-երի կարգավիճակը՝ նշելով, որ վերջիններս առևտրային գործունեություն չեն իրականացնում, առք ու վաճառք չկա, ՋՕԸ-ն ընդամենը վերցնում է ջուրն աղբյուրի մոտ և հասցնում իր անդամներին: Հետևաբար հարց է ծագում, ինչու՞ պետք է ՋՕԸ-ն հարկ վճարի:

ՀՀ Վարչապետը նշեց, որ ջուրը ապրանք է և ցանկացած ապրանքի համար անհրաժեշտ է վճարել: Հարց է առաջանում. եթե մասնավոր ընկերություն ցանկանա մտնել այս ցանցի մեջ և հայտնի, որ պատրաստ է նույն ծառայությունները, ինչ մատուցում են ՋՕԸ-երը, մատուցել ավելի արդյունավետ և իրականացնել առևտրային գործունեություն, պետք է արդյո՞ք վերջինիս թույլատրել:

Ինեսա Գաբայանը պատախանեց, որ եթե ի վերջո այդ ծառայության արդյունքում ջուրը գյուղացուն կմատակարարվի ավելի արդյունավետ և ավելի էժան, ապա կարելի է նաև թույլատրել:

Ի պատասխան ՀՀ վարչապետը նշեց, որ այս դեպքում մասնավոր կազմակերպությունը կարող է հայտնել, որ ինքը պատրաստ է մատուցել ավելի արդյունավետ և էժան ծառայություններ, սակայն ՋՕԸ-երի հետ հավասար դաշտում գտնվելու համար անհրաժեշտ է իրեն ևս ազատել հարկերից:

ՀՀ Վարչապետը նշեց նաև, որ այս հարցում առկա է բանավիճային խնդիր և դեռևս հստակ չէ, թե որ տարբերակն է ընդունելի: Անհրաժեշտ է ավելի մանրակրկիտ լսել Խորհրդատուի փաստարկները և ունենալ առանձին քննարկում այս հարցի կապակցությամբ: Միաժամանակ անհրաժեշտ է հստակ գիտակցել, թե պետությունը ո՞ր ուղղությամբ է գնալու և ի՞նչ է ցանկանում ունենալ այս ոլորտում՝ շուկայական, թե՝ կարգավորվող դաշտ:

Տիգրան Դավթյանը նշեց, որ միջազգային պրակտիկայում առկա է հարկային արտոնությունների կրճատման միտում, և եթե պետությունն ուզում է աջակցել այս կամ այն ոլորտին, ապա դա պետք է անել սուբսիդիաների տեսքով: Սա միջազգային կառույցների կողմից ընդունված մոտեցում է: Բացի այդ հարկային արտոնությունների կիճատումը դրված է ՀՀ Կառավարության ծրագրում որպես սկզբունք և իմաստ չունի այլևս անդրադառնալ հարկային արտոնությունների խնդրին:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել Ոռոգման և դրենաժի հայեցակարգի հաստատման համար անհրաժեշտ հետագա քայլերի ժամանակացույցը, այն է՝ մինչև

դեկտեմբերի 16-ին կայանալիք նիստն ամփոփել Փաստաթղթի վերաբերյալ ներկայացված դիտողությունները և առաջարկությունները, ներկայացնել հայեցակարգային փաստաթուղթը հաստատման և անհրաժեշտության դեպքում կազմակերպել համատեղ քննարկում շահագրգիռ գերատեսչությունների հետ՝ վիճահարույց հարցերի քննարկման և ամփոփման համար:

1-ին հարցի շուրջ արձանագրվեցին հետևյալ հանձնարարականները. 1. ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանին՝ 10-օրյա ժամկետում շահագրգիռ գերատեսչությունների և Խորհրդատու ընկերության հետ կազմակերպել անհրաժեշտ քննարկումները՝ Փաստաթուղթը վերջնական տեսքի բերելու համար, անհրաժեշտության դեպքում նաև համատեղ քննարկում կազմակերպել ՀՀ վարչապետի մոտ, 2. ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանին՝ ներկայացնել Փաստաթղթի վերաբերյալ ՀՀ բնապահպանության նախարարության դիրքորոշումը:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնման Երկրորդ փաթեթը կներառի ծրագրում ընդգրկված շուրջ 40% ցամաքուրդների մաքրումը շուրջ 1.8 մլն. խմ ծավալով՝ բոլոր կոլեկտորային համակարգերում, բացառությամբ այն համակարգերի, որոնք ամբողջությամբ ընդգրկվել են առաջին փաթեթում, ինչպես նաև մի շարք այլ կառուցվածքների վերանորոգում և վերականգնում, որոնք մանրամասն ներկայացված են եղել օրակարգին կից ներկայացված տեղեկանքում: Մասնավորապես նախատեսվում է կոնսերվացնել կամ վերանորոգել շուրջ 50 ինքնաշատրվանող (արտեզյան) և ուղղահայաց դրենաժային հորեր, փակել (լիկվիդացնել) մի քանի վթարային ինքնաշատրվանող հորատանցքեր:

Արա Հովսեփյանը նշեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ն անհրաժեշտության պարագայում կարող է ներկայացնել նաև նախագծող կազմակերպության հաշվետվությունը, որտեղ բոլոր նշված հարցերը և ընտրության սկզբունքները ներկայացված են ավելի խորը և մանրամասն:

Արա Հովսեփյանը ներկաների ուշադրությունը հրավիրեց նաև այն փաստի վրա, որ ներկայացված դիրքորոշումն արդեն իսկ քննարկվել է ՀՀ բնապահպանության նախարարի հետ և ընդունելի է վերջինիս համար: Նշվեց նաև այն հանգամանքը, որ Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնման Երկրորդ փաթեթի շրջանակներում վերականգնման են ենթակա նաև որոշ պոմպակայաններ, որի դեպքում կավելանա էլեկտրաէներգիայի ծախսը, որի ծավալային և գումարային գնահատականը ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը կիրականացնի և կներկայացնի ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեին:

Հարցը ներկայացնելուց հետո **միաձայն որոշվեց՝** ի գիտություն ընդունել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ծրագրի ենթակառուցվածքներ բաղադրիչի շրջանակներում Արարատյան դաշտավայրի դրենաժային համակարգի վերականգնման Երկրորդ փաթեթում ընդգրկված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը ներկայացրեց փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել գնումների պլանում, մասնավորապես նշելով, որ ծրագրի գնումների պլանից դուրս է եկել Մեղրիի ինքնահոս համակարգի կառուցում նախատեսող տողը, քանի որ վերջինիս նախագիծը ՀՄԿ-ի կողմից համարվել է տեխնիկապես անընդունելի, ինչպես նաև ժամանակավորապես՝ գումարների սակավության պատճառով, Հալավարի ինքնահոս համակարգը հանվել է գնումների պլանից:

Անդրանիկ Անդրեասյանը նշեց, որ միգուցե առկա նախագիծն անընդունելի է ՀՄԿ-ի տեսանկյունից, սակայն այս համակարգի կառուցումը ռազմավարական նշանակություն ունի ՀՀ տեսանկյունից և ենթակա է կառուցման ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:
Արա Հովսեփյանը նաև նշեց, որ գնումների պլանում ավելացվել են ՁՕԸ-երի և ՁՄԳ-ների տեխնիկական օժանդակություն նախատեսող տողեր:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի գնումների փոփոխված պլանը:

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանն առաջարկեց Արա Հովսեփյանին հաշվետվությունը ներկայացնել հանրությանը, ով հանդիսանում է ծրագրի իրական շահառուն: Փաստն այն է, որ ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ հայ գյուղացին իրազեկ է, սակայն անհրաժեշտ է ներկայացնել նաև ծրագրի առաջընթացի արդյունքները և ձեռքբերումները:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի տարեկան լրացուցիչ հաշվետվությունը:

4-րդ հարցի շուրջ արձանագրվեց հետևյալ հանձնարարականը. ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանին՝ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանի հետ համաձայնեցնել հասարակության իրազեկման ծրագիրը և ՁԼՄ-ներով և այլ միջոցներով իրազեկել հանրությանը ՀՄՀ-Հայաստան ծրագրի առաջընթացի մասին:

Օրակարգի 5-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետն առաջարկեց այս հարցի քննարկումը հետաձգել մինչև 2010թ.՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս տարի քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի վերանայում տեղի չի ունեցել:

Արմեն Գևորգյանը նշեց, որ նմանատիպ ծրագրեր իրականացնող այլ կառույցներում ևս աշխատավարձերը չեն վերանայվել և պարգևավճարների տրամադրման մեխանիզմ չի նախատեսված:

Արման Ոսկանյանը ավելացրեց, որ բյուջեով նախատեսված պարգևավճարները աշխատակիցներին չտալու դեպքում անհրաժեշտ է հիմնավորել, թե ինչու՞ այդ պարգևավճարները չեն տրվում:

Արմեն Գևորգյանը հայտնեց, որ հիմնավորում է հանդիսանում այն հանգամանքը, որ ՀՄՀ-Հայաստան ծրագրի որևէ բաղադրիչ առ այսօր իր տրամաբանական ավարտին չի հասել:

Արա Հովսեփյանը նշեց, որ ծրագրի կառուցվածքն այնպես է, որ ծրագրի բաղադրիչներով նախատեսված աշխատանքներն ավարտվում են ծրագրի հետ:

Պողոս Շահինյանը նշեց, որ պետք չէ համեմատական անցկացնել պետական ծառայողների, մասնավոր կամ միջազգային ոլորտի աշխատակիցների միջև, քանի որ վերջիններիս կողմից իրականացվող աշխատանքի բնույթը էապես տարբերվում է, բացի այդ բոլոր պետական ծառայողները ստանում են 13-րդ աշխատավարձ, իսկ որոշ գերատեսչություններում նաև եռամսյակային պարգևավճարներ:

Կարեն Զադոյանն առաջարկեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի աշխատակիցների պարգևավճարների տրամադրման համար նախատեսված գումարները ուղղել շահառուների խորհրդի անդամներին օրապահիկ և գիշերավարձ վճարելուն:

Արա Հովսեփյանը նշեց, որ այդ առաջարկը հակասում է շահառուների խորհրդի ընդհանուր սկզբունքին, համաձայն որի շահառուների խորհուրը գործում է հասարակական հիմունքներով և որևէ ֆինանսական փոխհատուցում կատարած աշխատանքի համար չի ստանում: Բացի այդ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը փոխհատուցում է շահառուների խորհրդի՝ ՀՀ մարզերից եկող անդամների ճանապարհածախսը:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց** հետաձգել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ՊՈԱԿ-ի աշխատակազմի աշխատավարձերի տարեկան բարձրացման և պարգևավճարների տրամադրման հարցի հաստատումը:

Օրակարգի 6-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը ներկայացրեց տեղեկանք, որտեղ մանրամասն նկարագրված էր ստեղծված իրավիճակը, ինչպես նաև ներկայացրեց ՀՄԿ՝ ՇԽ 5 պատվիրակների հաստատումը մերժելու մասին նամակը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հայտնեց, որ ՀՀ կառավարությունը տեղյակ է առկա խնդրին և ուսումնասիրել է ներկայացված փաստարկները ու եկել է համոզման, որ ՇԽ ընտրությունների արդյունքում ձևավորված մեծամասնությունը ճիշտ է իր պնդումներում:

ՀՀ Վարչապետը նաև նշեց, որ ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար Դավիթ Սարգսյանի հետ ունեցած ՇԽ հանդիպումների արդյունքում կառավարությունը պատասխան է ուղղել ՇԽ 7 անդամներին՝ ներկայացնելով ՀՀ Կառավարության դիրքորոշումը:

Կարեն Զադոյանը ներկայացրեց, որ շահառուների խորհրդի ընտրությունների արդյունքում ընտրված 13-15 տեղերում գտնվող անդամների և 16 և 17 տեղերում գտնվող թեկնածուների մեջ առկա է մի քանի ձայնի տարբերություն և ՇԽ 7 անդամները պնդում են, որ վավեր քվեաթերթիկների մեջ կան 4 անվավեր քվեաթերթիկներ, որոնք անվավեր ճանաչվելու պարագայում ձայների բաշխվածությունը կարող է փոխվել: Բացի այդ ՇԽ 8 անդամները՝ խախտել են ՇԽ կանոնակարգը և հղում կատարելով ՀՄՀ-Հայաստան ծրագրի Կառավարման համաձայնագրի դրույթներին, որտեղ սահմանված է, որ քվորումն ապահոված լինելու համար անհրաժեշտ է ՇԽ անդամների առնվազն պարզ մեծամասնության մասնակցությունը, գումարել են ՇԽ նիստ և ընտրել են կառավարման խորհրդի նոր կազմ: Այդ մասին նամակ է ուղղվել ՀՀ կառավարություն, որով իրազեկվել է առկա վիճակի մասին և առաջարկվել է հարցին լուծում տալ:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե ի՞նչ են առաջարկում ՇԽ անդամները առկա իրավիճակը լուծելու համար:

Կարեն Զադոյանը հայտնեց, որ ՇԽ 7 անդամներն առաջարկում են իրականացնել ՇԽ ընտրաթերթիկների վերահաշվարկ կառավարման խորհրդի, ՀՄԿ-ի ներկայացուցչի և ՇԽ 15 անդամների մասնակցությամբ, լուծել այս հարցը, հետո անվավեր ճանաչել նախկինում ՇԽ ընդունած որոշումները և նոր 15 անդամից բաղկացած կազմով շարունակել ՇԽ գործունեությունը:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե ո՞վ է իրականացրել ընտրական գործընթացը:

Կարեն Զադոյանը նշեց, որ ընտրություններն անցկացվել են ՇԽ կողմից ընտրված՝ 7 անդամից բաղկացած ընտրական հանձնաժողովի կողմից:

ՀՀ վարչապետը հետաքրքրվեց, թե այդ յոթ անդամների մեջ կա արդյո՞ք բանավեճ, թե բոլոր անդամները համակարծիք են քվեաթերթիկների վավերության հարցում:

Կարեն Զադոյանը պատասխանեց, որ քվեաթերթիկների վերանայմանը ընտրական հանձնաժողովի անդամներից մեկը չի մասնակցել, իսկ մյուս վեց անդամներից 1-ը 3 քվեաթերթիկի վերաբերյալ ներկայացրել է հատուկ կարծիք, իսկ մեկ քվեաթերթիկի վերաբերյալ եղել է մեկ ձեռնպահ անձ:

Պողոս Շահինյանը ներկայացրեց, որ ՇԽ ընտրությունների ընթացքին հետևել են դիտորդներ, Շխ նախորդ կազմի անդամներ, ինչպես նաև ՇԽ անդամության թեկնածուներ: Ընտրությունների ընթացքում և ընտրություններից հետո որևէ դիտողություն վերջիններիս կողմից չի ներկայացվել: Ընտրություններից 2-3 օր հետո ՇԽ ընտրությունների արդյունքում 16 և 17-րդ տեղերում գտնվող անդամները ներկայացրել են դիմում՝ վերահաշվարկ կատարելու պահանջով: Չնայած այն հանգամանքին, որ պահանջն անհիմն էր, այնուամենայնիվ ելնելով այն հանգամանքից, որ ՇԽ-ն հանդիսանում է հասարակական կառույց, ուստի կատարվել է քվեաթերթիկների վերանայում: Վերանայման արդյունքում երկու վիճահարույց քվերթերթիկ ի հայտ եկան, որոնք, սակայն, ընտրական հանձնաժողովի ձայների մեծամասնությամբ ճանաչվել են վավեր: Ինչ վերաբերում է ՇԽ առաջին նիստին, ապա այն պետք է տեղի ունենար հոկտեմբերի սկզբին, սակայն հաշվի առնելով վերահաշվարկը, նիստը հետաձգվել է: Նիստը հրավիրելու հաջորդ առաջարկին ՇԽ 7 անդամները դեմ են արտահայտվել և իրենց էլեկտրոնային հաղորդագրություններում նշել են, որ նիստերին չեն մասնակցելու՝ մինչև հարցը լուծում չստանա: ՇԽ մյուս անդամները հարցի լուծում չտեսնելու պատճառով հրավիրել են ՇԽ նիստ, որը բոյկոտվել է ՇԽ 7 անդամների կողմից և որոշում է ընդունվել ղեկավարվել Կառավարման համաձայնագրի դրույթներով, քանի որ ստեղծվել էր անելանելի վիճակ, իսկ ՇԽ յուրաքանչյուր անդամ պատասխանատու է իր գործունեությամբ իրեն ընտրած 100-ից ավելի կազմակերպությունների առաջ:

Կառավարման համաձայնագրով ղեկավարվելիս ՇԽ 8 անդամները հիմք են ընդունել նախ այն հանգամանքը, ՇԽ կանոնակարգը իրավական ուժ ունեցող փաստաթուղթ չէ, ընդունվել է ՇԽ-ի կողմից և ՇԽ-ի կողմից էլ կարող է փոփոխվել, բացի այդ կա միջազգային վավերացված համաձայնագիր, որը գերակայում է: Իրավիճակը մտել էր փակուղի, և ՇԽ անդամները կարող էին անվերջ բոյկոտել ՇԽ նսիտերը, երբևէ ՇԽ կազմի 2/3-ը չհավաքվեր և երբևէ նիստ չկայանար, ուստի ՇԽ 8 անդամները որոշում են ընդունել ղեկավարվել Կառավարման համաձայնագրով և շարժվել առաջ: Հետագայում քննարկումներ են տեղի ունեցել ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավարի մոտ, բազմիցս քննարկվել է իրավիճակը և ՇԽ 8 անդամները նամակ են ուղղել ՀՀ-ում ԱՄՆ դեսպանին, ՀՄԿ-ին և ՀՀ Կառավարությանը, որտեղ ներկայացված է եղել ՇԽ 8 անդամների դիրքորոշումը ստեղծված իրավիճակի մասին, ինչպես նաև նշվել է ՇԽ 5 ընտրված պատվիրակների՝ ինքնաբացարկի պատրաստատկամության մասին:

Պողոս Շահինյանը պաշտոնապես հայտնեց իր ինքնաբացարկի մասին:

ՀՀ Վարչապետը հետաքրքրվեց, թե ինչու՞ ՇԽ 7 անդամները չեն մասնակցել ՇԽ նիստերին, քանի որ ՇԽ 8 անդամները կոչ են արել մասնակցել նիստին և լուծել ստեղծված իրավիճակը:

Կարեն Զադոյանը հայտնեց, որ ՇԽ 7 անդամները նախապես էլեկտրոնային փոստի միջոցով կոչ են արել չգումարել ՇԽ նիստ՝ մինչև ՇԽ անդամների ընտրության հարցի լուծումը:

Դավիթ Սարգսյանը նշեց, որ հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ այդ մի քանի քվեաթերթիկի անվավերության պարագայում ՇԽ կազմի փոքրամասնությունը կդառնա մեծամասնություն, իսկ մեծամասնությունը՝ փոքրամասնություն:

Արման Ոսկանյանը նշեց, որ ինքը ներկա է եղել ընտրություններին և վստահ է, որ և՛ ՇԽ և՛ Կառավարման խորհրդի պատվիրակների ընտրությունները անցել են նորմալ: Բացի այդ

ստեղծված իրավիճակն իրականում այնքան բարդ չէ, որքան թվում է առաջին հայացքից: Կարելի է իրավիճակը շտկելու համար՝ օրինակ նվազեցնել ՇԽ թիվը 14-ի:

Արման Ոսկանյանը խնդրեց Ալեքս Ռասինին պարզաբանել ՀՄԿ-ի նամակը՝ ՇԽ ընտրված պատվիրակներին չհաստատելու մասին:

ՀՀ Վարչապետը հարցրեց Արա Հովսեփյանին, թե ո՞ր մարմինն է իրավասու լուծելու ստեղծված իրավիճակը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ այդ իրավասությունը ըստ էության պատկանում է ՇԽ-ին: Սակայն Համաձայնագրում սահմանված է, որ ՀՀ Կառավարությունը պետք է ապահովի ՇԽ ընտրությունը և գործունեությունը:

Դավիթ Սարգսյանը մեջբերեց, որ իր այդ պարտականությունը Կառավարությունը ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի միջոցով կատարել է՝ կազմակերպելով ՇԽ ընտրություններ:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց նաև, որ ՇԽ պատվիրակները կառավարման խորհրդում պաշտոնավարում են մեկ տարի ժամկետով, որից հետո նրանց լիազորությունները դադարում են: Տվյալ դեպքում ՀՄԿ-ն բացառություն է արել և թույլատրել է առկա կազմի պաշտոնավարումը մինչև նոր կազմի հաստատումը: Բայց, ինչպես էլեկտրոնային նամակում նշել է ՇԽ պատվիրակներից մեկը, ՇԽ անդամների մասնակցության համար անհրաժեշտ է նաև վերջիններիս ցանկությունը:

Պողոս Շահինյանը ներկաներին հայտնեց, որ ՇԽ վերջին երկու նիստերը տեղի են ունեցել ՇԽ 15 անդամների մասնակցությամբ և ի թիվս այլ հարցերի քննարկվել է 2/3-ի կիրառման հարցը և 8 կողմ, 5 դեմ և 2 ձեռնպահ ձայներով որոշում է ընդունվել փոփոխել այս կետը և կիրառել Կառավարման համաձայնագրի դրույթը:

ՀՀ Վարչապետը առաջարկեց դադարեցնել այս քննարկումը, քանի որ սա չի հանդիսանում Կառավարման խորհրդի իրավասության հարց:

Կարեն Զադոյանը հայտնեց, որ Պողոս Շահինյանի կողմից նշված հարցը կանխակալ ներկայացվել է այլ հարցերի շարքում և որոշման ընդունման հարցը միանշանակ չէ: Ինչ վերաբերում է իրավասության հարցին, ապա այդ իրավասությունը պատկանում է ԱՄՆ և ՀՀ Կառավարություններին: Ամերիկյան կողմը իր դիրքորոշումն արդեն հայտնել է, մնում է ստանալ նաև հայկական կողմի դիրքորոշումը:

Ալեքս Ռասինը հայտնեց, որ Համաձայնագրի նպատակը քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովումն է, որը նպաստում է ծրագրի թափանցիկությանը: Եվ անդրադառնալով ծրագրի արդյունքների վերաբերյալ հանրության իրազեկմանը, պետք է նշել, որ այս հարցում ՇԽ-ն մեծ դեր ունի: Որպես դոնոր կազմակերպություն ՀՄԿ-ն կցանկանար, որպեսզի ծրագրի հաջողությունները տեսանելի լինեին և դա տեղեկացվեր հասարակությանը ծրագրի ՇԽ կողմից: Չանդրադառնալով մանրամասնություններին ակնհայտ է, որ ՇԽ-ում որոշակի աստիճանի անվստահություն կա ՇԽ մի խմբից մյուս կողմի հանդեպ, որը իր բացասական անդրադարձը կարող է ունենալ նաև ծրագրի վրա: ՀՄԿ-ն իրավասու չէ ասել, թե որ կողմն է ճիշտ կամ սխալ, սակայն փաստ է, որ կան դժգոհ անձինք: Միանշանակ է, որ այս հարցը լուծելու իրավասությունը պատկանում է ՇԽ-ին՝ անձանց, ովքեր հանդիսանում են այն հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ովքեր հետաքրքրված են ծրագրով: Սակայն մյուս կողմից էլ ՀՀ կառավարությունը և ՀՄՀ-Հայաստանը պետք է շահագրգռված լինեն, որ ՇԽ-ի գործունեությունը լինի արդյունավետ և իր դրական ազդեցությունը ունենա ծրագրի վրա: Խոսքը չի գնում 15 անդամների միանշանակ համաձայնության մասին, սակայն ներկայումս անհամաձայնությունը զգալի է:

Ալեքս Ռասինը նաև կոչ արեց ՇԽ-ին փորձել հաղթահարել առկա խնդիրները: ՀՀ կառավարությունը, որպես Համաձայնագրի կողմ պետք է ապահովեր արդարացի

ընտրությունների կազմակերպումը, և եթե կառավարությունը գտնում է, որ այս ամենը կազմակերպված է արդարացի կերպով, ապա կարող է իր դիրքորոշումը ներկայացնել այս գործընթացի վերաբերյալ: Անհրաժեշտ է ունենալ ՇԽ, որը հետաքրքրված է ծրագրով և որի գործունեությունը բխում է ծրագրի շահերից:

ՀՀ Վարչապետը համաձայնեց Ալեքս Ռասինի բոլոր մեջբերումների հետ և իր դժգոհությունը հայտնեց ՇԽ-ին՝ նշելով, որ վերջիններս չեն կարողանում 15 անձով ընդհանուր լուծում գտնել՝ դրանով իսկ բիծ թողնելով ՀՀ Կառավարության վարկանիշի վրա:

ՀՀ վարչապետը հարցրեց ՇԽ անդամներին, թե արդյո՞ք վերջիններս ի վիճակի են լուծելու առկա խնդիրը, քանի որ ստեղծված իրավիճակը հարվածում է ՀՀ կառավարության հեղինակությանը:

Կարեն Զադոյանը նշեց, որ ՇԽ 7 անդամները պատրաստ են համատեղ 8 անդամի հետ քննարկելու և գալու կոնսենսուսի:

Դավիթ Սարգսյանը հայտնեց, որ ծանոթ լինելով ստեղծված իրավիճակին, վստահ է որ կողմերը չեն կարող ընդհանուր լուծման գալ:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե արդյո՞ք հնարավոր է ՇԽ նոր ընտրություններ անցկացնել:

Պողոս Շահինյանը դեմ արտահայտվեց այս առաջարկին, նշելով, որ այս դեպքում անտեսվում է 8 անդամների կարծիքը և ստեղծվում է նախադրյալ, որ յուրաքանչյուր անգամ, երբ ընտրությունների արդյունքում փոքրամասնությունը չհամաձայնի արդյունքների հետ պետք է նոր ընտրություն անցկացվի և այս գործընթացն անվերջ շարունակվի: Լուծումն այն է, որ 15 անդամները հավաքվեն և կազմակերպեն կառավարման խորհրդի պատվիրակների նոր ընտրություններ:

Վիկտոր Ենգիբարյանը հարցրեց, թե ինչու՞ են ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը և ՇԽ 8 անդամները դեմ, որ վերահաշվարկ կատարվի:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի դիրքորոշումը ի սկզբանե ներկայացված է եղել և ՊՈԱԿ-ն աջակցել է ՇԽ ընտրությունների և վերահաշվարկի անցկացմանը և երբևէ դեմ չի եղել և հիմա էլ դեմ չէ վերահաշվարկին, սակայն ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը չէ այն մարմինը, ով իրավասու է նմանատիպ որոշում կայացնել:

ՀՀ Վարչապետն առաջարկեց հրավիրել ՇԽ անդամներին ընտրած 400 կազմակերպությունների ներկայացուցիչներին և կազմակերպել նոր ընտրություններ:

Պողոս Շահինյանը հայտնեց, որ ՇԽ յուրաքանչյուր անդամ ժամանակ է ծախսել, հանդիպել է իր ընտրողների հետ, ուստի անհրաժեշտ է իմանալ նաև ՇԽ մյուս անդամների կարծիքն այս մասին:

Արման Ոսկանյանը նշեց, որ եթե երկրորդ անգամ էլ ընտրություն կատարվի և կողմերից մեկը դժգոհություն հայտնի, ապա պետք է նորից այս գործընթացը կրկնվի, ուստի առաջարկեց ՇԽ-ին ժամանակ տալ այս հարցը ներքին քննարկումներում լուծելու համար:

ՀՀ Վարապետը նշեց, որ անհրաժեշտ է որ ՇԽ-ին հավատա և վստահի առաջին հերթին քաղաքացիական հասարակությունը: Եթե հետագայում էլ ՇԽ 15 անդամների միջև համերաշխություն չի լինելու, ապա ՀՀ կառավարությունը կնախաձեռնի նոր ընտրություններ:

Արմեն Գևորգյանն առաջարկեց ՇԽ-ին տալ համատեղ հարցը լուծելու համար ժամանակ մինչև դեկտեմբերի 16-ը, որից հետո, լուծում չլինելու պարագայում, կազմակերպել նոր ընտրություններ՝ նախապես հաստատելով ՇԽ գործունեության կանոնները:

Ներսես Երիցյանն առաջարկեց ցանկով հրավիրել բոլոր ՀԿ-ներին մասնակցելու ՇԽ ընտրություններին:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը համաձայնեց այս առաջարկի հետ:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց** մինչև 2009թ. դեկտեմբերի 16-ը ժամանակ տալ ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների խորհրդին համատեղ քննարկելու և լուծելու ստեղծված իրավիճակը:

6-րդ հարցի շուրջ արձանագրվեցին հետևյալ հանձնարարականները. 1. ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների խորհրդին՝ կազմակերպել ՇԽ հանդիպումներ, քննարկել ստեղծված իրավիճակը և փորձել հարցին լուծում տալ, 2. ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանին՝ 2009թ. դեկտեմբերի 16-ին կայանալիք կառավարման խորհրդի նիստի ընթացքում տեղեկատվություն ներկայացնել ԿԽ-ին ձեռք բերված համաձայնությունների, ՇԽ-ում առկա իրավիճակի և հետագա քայլերի վերաբերյալ:

Օրակարգի 7-րդ հարցի ա/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

<u>Միաձայն</u> որոշվեց հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում Սպիտակի ինքնահոս համակարգի կառուցման պայմանագրի նախագիծը:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ,
«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյանը